Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
հունվարի 31-ի N 62-Ն որոշման

# ՀԱՅՏ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | ***ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ ՄԵՂՐԻԻ ՄԱՔՍԱԿԵՏԻՆ ԿԻՑ ԵՎ Մ-2 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ։*** |
| **Մարզ** | ***ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ*** |
| **Համայնքը /համայնք-ները** | ***ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ***<br>***Խոշորացված համայնքում ընդգրկված բնակավայրեր.***<br>*քաղաքային՝ Մեղրի և Ագարակ*<br>*գյուղական՝ Լիճք, Տաշտուն, Թխկուտ, Այգեձոր, Վարդանիձոր, Լեհվազ, Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար, Կարճևան, Շվանիձոր, Ալվանք, Նռնաձոր* |
| **Համայնքի /բնակա-վայրի հեռավորու-թյունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից** | *Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 380կմ է:* |
| **Համայնքի /բնակա-վայրի բնակչությունը** | *Մեղրի համայնքի ընդհանուր բնակչությունը՝ 11604 մարդ* |
| **Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի** | *Մեղրին սահմանամերձ համայնք է:*<br>*Մեղրի համայնքում ընդգրկված բնակավայրերից միայն Տաշտունն է դասվում բարձրլեռնային բնակավայրերի շարքին:* |
| **Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն** | *Մեղրի համայնքում չկա գազամատակարարում, թեպետ Մեղրի և Ագարակ քաղաքներում իրականացվել են գազի բաշխիչ ցանցի կառուցման աշխատանքներ:*<br>*Համայնքի բոլոր բնակավայրերում առկա է էլեկտրամատակարարում:*<br>*Ջրահեռացման համակարգ (կոյուղի) առկա է միայն Մեղրի և Ագարակ քաղաքներում:*<br>*Ոռոգման ցանցի ջրագծերը ընդհանուր առմամբ գտնվում են բարվոք վիճակում:*<br>*2017 թվականի ընթացքում Մեղրի համայնքի բոլոր բնակավայրերում ներդրվել է փողոցային լուսավորության էներգախնայող համակարգ:*<br>*Համայնքի 12 բնակավայրերում /Մեղրի, Ագարակ, Լիճք, Տաշտուն, Թխկուտ, Այգեձոր, Վարդանիձոր, Լեհվազ, Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար, Կարճևան/ առկա է շուրջօրյա ջրամատակարարում: Շվանիձոր, Ալվանք, Նռնաձոր բնակավայրերում խմելու ջուրը ստացվում է ստորգետնյա ջրհավաք կայաններից և սակավաջուր ամիսների ընթացքում լինում են ընդհատումներ:* |

| | |
|---|---|
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | *Ծրագրով նախատեսվում է Մեղրի համայնքում հիմնել 2 կայանատեղի հարակից վաճառքի տաղավարներով/ազրոշուկաներ/ և սանհանգույցով, որոնցից մեկը համայնքի ամենաբանուկ մասում՝ մաքսակետի հարակից տարածքում, իսկ մյուսը Մեղրի քաղաքում՝ մաքսակետից 11 կմ հեռավորության վրա և Մ-2 միջպետական ճանապարհի հարևանությամբ: Կայանատեղիների հիմնումը միտում ունի լուծելու Մ-2 միջպետական ճանապարհի թողունակության բարձրացման, երթևեկելի հատվածների ծանրաբեռնվածության նվազեցման և կայանումների կանոնակարգման խնդիրները: Ճանապարհային ոստիկանության հետ համագործակցության արդյունքում կկիրառվեն նաև անհրաժեշտ ճանապարհային նշաններ և գծանշումներ:*<br>*Կայանատեղիների բացակայության պատճառով ավտոտրանսպորտային միջոցները կայանում են կատարում ճանապարհի երթևեկելի մասերում, հաճախ նաև՝ մայթերին, և առաջանում են խցանումներ: Մեղրիի մաքսակետով Հայաստանից Իրան և հակառակ ուղղությամբ սահմանահատում են իրականացնում օրական մոտ 120 ավտոտրանսպորտային միջոցներ: Վիզային ռեժիմի վերացման արդյունքում էականորեն ավելացել են ուղևորափոխադրումներն ու բեռնափոխադրումները: Հետևաբար քաղաքացիներին և տնտեսվարող սուբյեկտներին կայանումների կարգավորման ուղղությամբ ծառայությունների մատուցումը գնալով ավելի է կարևորվում:*<br>*Ծրագրով նախատեսվում է նաև կայանատեղիների հարևանությամբ վաճառքի տաղավարների տեղադրում՝ երթևեկողների և կայանողների համար ստեղծելով գնումներ կատարելու հնարավորություն: Կայնատեղիներին հարակից վաճառքի տաղավարների տեղադրումը կնպաստի Մեղրի համայնքում արտադրվող գյուղատնտեսական մթերքի իրացմանը: Այն նպատակ ունի խթանել փոքրածավալ արտադրող-ֆերմերներին իրացնելու իրենց արտադրանքը համայնքի ամենաբանուկ տարածքներում, շփվելու գնորդի հետ և բարձրացնել արտադրվող մթերքի և սպասարկման որակը:*<br>*Ենթադրվում է, որ IFAD-ի կողմից ոռոգման ցանցի բարելավման արդյունքում առաջիկա տարիներին գյուղատնտեսական մթերքների արտադրական ծավալներն աճելու են և նվազում են իրացման հնարավորությունները: Մեղրիում արտադրվում է միջինում տարեկան 1200 տոննա նուռ, 950 տոննա արքայանարինջ, 930 տոննա թուզ և այլ տեսակներ, որից իրացվում է մոտ60%-ը:*<br>*Ծրարգրով նախատեսվում է նաև կառուցվելիք կայանատեղիներին և շուկաներին հարող տարածքի բարեկարգում (լուսավորության անցկացում, ասֆալտապատում, սանհանգույց, մայթեր), ինչը էապես կբարձրացնի Հայաստանի զբոսաշրջային գրավչությունը՝ սկսած հարավային դարպասից:*<br><br>***Առկախնդիրները.***<br>• *Ավտոկայանատեղիի բացակայություն **(**Մեղրի համայնքի տարածքում մեքենաների կայանումը չի կանոնակարգվում և իրականացվում է անկազմակերպեղանակով):*<br>• *Մեղրիի մաքսակետին հարող ճանապարհահատվածի ծանրաբեռնվածություն:*<br>• *Մեղրիի մաքսակետին հարող տարածքի անբարեկարգ վիճակ (գրունտային ճանապարհներ, փողոցային լուսավորության, սանհանգույցի բացակայություն)*<br>• *Տեղական գյուղատնտեսական շուկայի բացակայություն և արտադրված գյուղմթերքի իրացման սակավ* |

| | |
|---|---|
| | հնարավորություններ: |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | ***Ակնկալվող արդյունքներ***<br>• Մոտ 70 /ընդհանուր առմամբ/ կայանման կետեր ունեցող կայանատեղիների առկայություն Մեղրի համայնքում<br>• 19-20 վաճառքի տաղավարների, սանհանգույցների առկայություն Մեղրիի մաքսակետի և Մ-2 միջպետական ճանապարհի հարևանությամբ<br>• Մեղրիի մաքսակետին հարող տարածքում 800մ փողոցային լուսավորության ցանցի առկայություն<br>• Մաքսակետի ավտոկայանատեղիից Ագարակ տանող 100մ ճանապարհատված ասֆալտապատ, առկա են մայթեր:<br>***Միջնաժամկետազդեցություն***<br>• Մեղրիի մաքսակետին հարող տարածքում և Մ-2 միջպետական ճանապարհի հարևանությամբ կանոնակարգված կերպով կայանում կատարելու հնարավորություն:<br>• Խցանումների և երթևեկելի ճանապարհների ծանրաբեռնվածության նվազում:<br>• Շուրջ 20 փոքր արտադրողների համար արտադրանքը տեղում վաճառելու կամ փոխանակելու հնարավորություն /մաքսակետի հարևանությունը հնարավորություն կտա վաճառել արտադրանքը ոչ միայն տեղացիներին, այլ և Իրան և Իրանից այցելող զբոսաշրջիկներին/<br>• Մեղրիի մաասքակետին հարող տարածքը լուսավորված է և բարեկարգ:<br>• 7 նոր աշխատատեղերի ստեղծում՝ կայանատեղիների գործարկման համար<br>• Համայնքի բյուջեում եկամուտների ավելացում տարեկան մոտ15 000 000 ՀՀ դրամով:<br><br>***Երկարաժամկետազդեցություն***<br>• Մեղրի համայնքն ունի սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակ:<br>• Մեղրիի մաքսակետին և Մ2 միջպետական ճանապարհին հարող տարածքներն ունեն զբոսաշրջային գրավչություն և բարենպաստ պայմաններ նոր ներդրումների ներգրավման համար:Վաճառքի տաղավարների քանակն ընդլայնվում է, կառուցվում են արագ սննդի, հուշանվերների և այլ վաճառքի կետեր:<br>• Համայնքի բյուջեում եկամուտների ավելացման շնորհիվ հնարավոր է դառնում ինքնուրույն կերպով իրականացնել համայնքի պարտադիր խնդիրներից բխող ծրագրեր՝ ապահովելով շարունակական զարգացում:<br><br><br>*Ծրագրի իրագործման արդյունքում հնարավոր կլինի հասնել վերոնշյալ խնդիրների լուծմանը և ծրագրի իրականացման նպատակներին, որոնք են՝*<br>• Նպաստել Մեղրի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և համայնքի եկամուտների աճին:<br>• Նպաստել Մ-2 միջպետական ճանապարհի և մաքսակետին հարող տարածքի ծանրաբեռնվածության նվազեցմանը և թողունակության բարձրացմանը:<br>• Նպաստել Մեղրի համայնքում արտադրվող գյուղմթերքի իրացմանը: |

<table>
<tr><td></td><td>Ծրագիրը համահունչ է Մեղրի համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ռազմավարությանը, որով գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը, ճանապարհային ենթակառուցվածքների բարելավումը համայնքի զարգացման գերակայություններից են:</td></tr>
<tr><td>Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները</td><td>1. Շինարարական աշխատանքների գնման գործընթացի կազմակերպում<br>01/07/2019-31/07/2019<br>2. Շինարարական աշխատանքների իրականացում՝ 01/08/2019-31/12/2019<br>3. Գույքի հանձնում շահագործման<br>4. Ավտոկանգառի, գյուղատնտեսական շուկայի օգտագործման կարգի,<br>պայմանների և սակագների սահմանում՝ 01/04/2020-30/04/2020<br>5. Կայանատեղիի գործարկման համար անհրաժեշտ աշխատակիցների<br>ներգրավում: 01/05/2020-31/05/2020<br>6. Գյուղմթերք վաճառող ֆերմերների ներգրավում և համայնք-մասնավոր հատված<br>համագործակցության հաստատում՝ 01/05/2020-31/05/2020</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում</td><td>Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ հողատարածքները հանդիսանում են համայնքային սեփականություն:<br>Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են:</td></tr>
<tr><td>Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա</td><td>Շահառուների քանակը:<br>➢ Իրանից Հայաստան և հակառակ ուղղությամբ երթևեկող զբոսաշրջիկներ, տեղաբնակներ, տնտեսվարող սուբյեկտներ, որոնց թիվը կարող է կազմել միջինում օրական 300 մարդ<br>➢ Գյուղմթերք վաճառող 20 ֆերմերներ<br><br>Եկամուտի ավելացման չափ<br>➢ Համայնքի բյուջեում եկամուտների ավելացում տարեկան մոտ15 000 000 ՀՀ դրամով:</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր</td><td>➢ Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվի 16 աշխատատեղ կառուցապատման աշխատանքների իրականացման նպատակով<br>➢ Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի 7 նոր աշխատատեղ (կայանատեղիի հսկիչներ, սանմաքրող), կներգրավվեն 20 ֆերմերներ կառուցված տաղավարներում վաճառք իրականացնելու համար:</td></tr>
<tr><td>Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը</td><td>Նախորդ տարվա բյուջեն՝ 678734000 դրամ.<br><br>
<table>
<tr><td></td><td>Պլանը</td><td>Փաստացին</td><td>Տոկոսը</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները<br>այդ թվում՝՝</td><td>631.898.000</td><td>575.085.000</td><td>91.0</td></tr>
<tr><td>-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝</td><td>551.818.000</td><td>528.825.000</td><td>95.8</td></tr>
</table></td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| - Սեփական եկամուտներ | 253.613.000 | 272.790.000 | 107.5 |
| -Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 88.080.000 | 46.260.000 | 52.5 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր***, *որից՝* | **678.734.000** | **558.420.000** | **82.3** |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 551.818.000 | 528.221.000 | 95.7 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 126.916.000 | 30.199 .000 | 23.8 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը***, *որից՝* | **126.916 .000** | **30.199 .000** | **23.8** |
| - Ճանապարհաշինություն | 4.799.149 | 4.799.149 | 100.0 |
| - փողոցային լուսավորություն | 4.176.000 | 4.138.000 | 99.0 |
| - Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 90.887.000 | 31.487.851 | 39.9 |
| - Կրթություն | 72.715.000 | 26.815.000 | 36.9 |
| - Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -40.862.000 | -37.041.000 | -90.6 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

***686790000*** *դրամ.*

| | ***Դրամ*** |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *այդ թվում՝՝* | **631.289.000** |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 591.289.000 |
| - սեփական եկամուտներ | 258.230.000 |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 40.000.000 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր***, *որից՝* | **686.790.000** |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 591.289.000 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 95.501.000 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը***, *որից՝* | **95.501.000** |
| - Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 69.230.000 |
| - Տնտեսական հարաբերություններ | 25.000.000 |
| - Կրթություն | 28.271.000 |
| - Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -27.000.000 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով**

*Կապիտալ ծախսերի իրականացման համար գումարները գոյանում են հիմնականում ոչ ֆինանսական ակտիվների օտարումից, որոնք սահմանափակ են:*

| | |
|---|---|
| **Կանխատեսվող բյուջետային մուտքե-րի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կան-խատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | *Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը՝<br>2017թ. կազմել են 31.017 մլն. դրամ<br>2018թ. կազմել են 37.041 մլն. դրամ<br><br>2019թ. բյուջեի ֆոնդային մասով նախատեսված ծրագրերն իրականացնելու նպատակով ֆոնդային մասի մուտքերը պլանավորվել են հետևյալ կերպ<br><br>Ընդամենը ֆոնդային մաս 122.501<br>այդ թվում՝<br>1. Տարեսկզբի ազատ մնացորդ 55.501<br>2. Ոչ պաշտոնական կապիտալ դրամաշնորհներ 40.000<br>3. Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր 27.000<br><br>Ոչ պաշտոնական կապիտալ դրամաշնորհները նախատեսվել են ներգրավվել այլ ներդրողների կողմից, որոնք պատրաստակամ են համաներդրումներ կատարել համայնքի բյուջեի ֆոնդային մասում, հաշվի առնելով ՀՀ կառավարության՝ համայնքների զարգացման կապիտալ ծրագրերում համաֆինանսավորում կատարելու պատրաստակամությունը:<br>Կանխատեսվող գումարի շրջանակներում բացի համաֆինանսավորման ներկայացված ծրագրերին, նախատեսված են մի շարք ծախսեր, որոնք համայնքի համար ունեն առաջնահերթություն և անհետաձգելի են:* |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն** | *100000000 դրամ (100%)* |
| **Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը** | *40000000 դրամ (40%)* |
| **Այլ ներդրողներ** | *Այլ ներդրողներ չկան* |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | *Սկիզբը՝ 01 հուլիսի 2019թ. Տևողությունը՝ 6 ամիս* |
| **Ծրագրի ծախսերը** | *Մանրամասն ներկայացնել ծախսերը՝ կցելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծանախահաշվային փաստաթղթերը:* |
| **Ամսաթիվ** | *07 մարտի 2019թ.* |

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին** (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

**Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Արմեն Սամվելյան**
**Հեռախոսահամարը, Էլեկտրոնային փոստը՝ 093 400 114, armen_samvelyan@mail.ru**

---

**Համայնքի ղեկավար՝ Մխիթար Զաքարյան**
(անունը, ազգանունը)

4.S.